

առև քերակ այսոք ով հաւաքի պղան ինչ աշխատիան  
առա զանդանական և առաւա մայնանքի ով մասնաւ  
ուսու սկզբ ով հաւաքարու պահանձն ով և հայ  
այսպատճ բայ և մաս ուսու ուսու մասաւայ բայ  
առա հոգածար շարօն ուսու ինքը ինքը պատահ  
պար ուսու մաս մարտ այսու այսու այսու ով և հայ  
բայ այսու մաս մարտ այսու այսու այսու ով և հայ

## ՍՏԵՓՈՆՆՈՍ ՊԵԼԵՍԵՆԵՍՆ

(Մի քանի խօսք նրա կեանքի եւ գրականական ուղ-  
ղութեան մասին):

„Եւ դու համոզուած, որ Մշմարտութեան  
Սկզբունցներին եւ հարազատ թարգման,  
Գոշով թոթի վրայ գծագրում էիր  
Թու քո մողերը ազնիւ եւ ընտիր:“

Գ. Բարխուդարեան:

Հայութեան կենդրոն՝ Ս. Էջմիածնում 1889 թ. փե-  
տրուարի 19-ին կամ հայոց մեհեկան ամսի 13-ին, մեր  
գրականութեան և ազգային վերածնութեան հիմնադիր  
սուրբ Մեսրոպի մահուան տարեղարձի օրը, խորհրդաւոր  
զուլքադիպութեամբ, կնքեց իր մահկանացուն Ստեփան-  
նոս Պալասանեանը:

Ո՞վ էր նա:

Պալասանեանն իր ազգի հարազատ զաւակը, հայ-  
աշխարհիկ լեզուի ու գրականութեան պայծառ աստղե-  
րից մէկն էր և հայ մանկաւոյ դաստիարակը: Նա ծնուել  
է Մոլդավիայում, այժմեան Ռումինիայի թագաւորութեան  
Քողուշան քաղաքում 1837 թուին և մանկութեան ժամա-  
նակ թոթովել է նաև մոլդաւերէն: Նրա հօր անունն էր

Ցովիհաննէս, իսկ մայրը կոչւում էր Փլօրա։ Փոքրիկ Ստեփաննոսն իր սկզբնական ուսումն ու կրթութիւնը ստանում է իր ծննդավայր Բօդուշանում Տէր Պօղոս քահանայ Յակոբեանի մօտ։ Մինչև տասն և հինգ տարեկան հասակը վայելելով իր սիրելի ծնողաց գորովագումբ խնամատարութիւնը, 1852 թուին պատանի Պալասանեանը զըրկում է իր սիրելի հօրից։ Սակայն նրա մտաւոր ընդունակութիւնն ու դէպի ուսումն տածած սէրը չեն թողնում, որ ընկճուի խեղճ որբի սիրտն այդ տխուր հանգամանքից։ Ընդ հակառակը նրան յաջողուում է նոյն տարին (1852 թ.) ուղևորուել Փարիզ և Բօդուշանի հայոց «ազգային հոգաբարձութեան» ատենապետ պ. Գասպար Կոյլաւեանի միջնորդութեամբ ընդունում է ի թիւա ձրիավարժ աշակերտաց Փարիզի Մուրագեան վարժարանի<sup>1)</sup>։

<sup>1)</sup> Աղա Սամուէլ Մուրագեանը, որի անունով կոչուեցաւ Փարիզում հիմուած ուսումնարանը, ծնուել է Եւգոնիայում 1760 թուին։ Սամուէլի հոյրը վաճառականական նպատակով ուղևորում է դէպի Հնդկաստան։ Ճանապարհին նա իր որդոց հետ միասին այցելում է Վենետիկի Միխիթարեանց վանքը և սիրավիր ընդունելութիւն գտնում հայ վարդապետներից 1775 թուին։ — Երևի Միխիթարեան հոյրերը շատ մեծ ապաւորութիւն և ազդեցութիւն են արել այդ ժամանակ երիտասարդ Սամուէլի սրահի վրայ, որ ապագան յում իր ազգօգուտ կտակի իրագործելը թողնում է դըրանց ձեռքը։ — Աղա Սամուէլը ճանապարհին հիւանդանաւում է Սուրաթում՝ երկու երիտասարդները արամութեամբ լցուած՝ թաղում են իրենց հօր դիակն այդաեղ և ճանապարհ ընկնում դէպի Մագրաս։ Սամուէլը ժիր և աշխոյժ երիտասարդ լինելով յաջող գործունէութիւն է ցոյց տալիս վաճառականական ասպարիզում և շուառով ամուսնանում է Եղուարդ Ռափայէլ Ղարամեան անունով ազդեցիկ ու յայտնի հարուստ հայ վաճառականի դըրամեր հետ Եղուարդ Ռափայէլը մեռնելով կտակում է մի

Այդ միջոցին Մուրադեան դպրոցը կառավարում էին Սարգիս Թէոդորեան և Գաբրիէլ Այվազեան վարդապետները, սակայն արդէն սկսուել էր դրանց գժտութիւնը Վենետիկի միաբանութեան հետ. և Պալասանեանի վարժարան

փոքրիկ գումար—այն է 7309 հուն կամ մօս 70,000 ֆրանկ, որ Մխիթարեանց հսկողութեամբ մի դպրոց պահպանուի հայազգի մանուկների դաստիարակութեան համար Սամուէլ Մուրադեանը, որ հանգուցեալի փեսան և կտակակատարներից մէկն էր, 1792 թուի փետրուարին Մադրասից գրած մի նամակով խոստանում է Մխիթարեան միաբանութեան անդամ հայր Նիկողայոսին, որ Ռաֆայէլի որդոց դաստիարակն էր Լօնդոնում, Ռաֆայէլի կտակած գումարի վրայ աւելացնել իր ստացած 32,000 հուն ժառանգութեան տասներորդ մասը, այն է 3200 \*) հուն, եթէ հայր Նիկողայոսը բարեհաճի գալ Մադրաս: Այսպիսով հայազգի մանկանց դաստիարակութեան համար նա համաձայնում էր տալ իր աներոջ կտակածգումարի հետ միասին ընդամենը 10,509 հուն կամ մօս 100,000 ֆրանկ. սակայն հայր Նիկողայոսը Մադրաս չէ գնում և այդպիսով թէ կտակը և թէ խոստումը შնում են անկատար:

Անցնում են տարիներ, սակայն աղա Սամուէլը չի մոռանում իր համազգի աղքատ մանուկների դաստիարակութեան նպաստելու խողանումը և անդադար նամակներ է գրում Վենետիկի Մխիթարեանց, որ իրենց միաբաններից մէկին ուղարկեն Մադրաս՝ իր որդոցը հայկական կրթութիւն տալու և ապագայ դպրոցի մասին խորհրդածելու: Զգիտենք ճանապարհի հեռաւորութեան, թէ այլ պատճառներով այդ ժամանակամիջոցում միաբանութիւնը չի յարգում աղա Սամուէլի առաջարկութիւնը: Մուրադեանը տեսնելով որ իր կենդանութեան ժամանակ չի կարող հասնել իր բաղձանքին, չի յուսահատում և մեռնելու ժամանակ իր վաղուց հետեւ փայփայած գաղափարի համար կտակում է մի պատկառելի գումար:

\*) Հնդկական հուն ոսկին արժէ 9 ֆրանկ 32 սանտիմ:

գալու երրորդ տարին արդէն, 1855 թուին, այդ զժուու  
թիւնն այն դժբաղդ հետևանկն ունեցաւ, որ պատճառ եղաւ  
դպրոցի անկման:

Ապա կարգադրում է, որ եթէ իր ժառանգներից մէ-  
կը վախճանուի առանց զաւակի, նրա կարողութիւնն աւե-  
լացուի դպրոցին կտակած գումարի վրայ և որդոցը պատուէր  
է տալիս, որ իրենց արդիւնքից տարեկան հինգ տոկոս  
աւելացնեն դպրոցին կտակած գումարի վրայ:

Իր հայրենիքից հեռու՝ պանդխառութեամբ Հնդկաստա-  
նում ապրող աղա Սամուէլ Մուրադ յնը, որի սիրաը արո-  
փում էր իր թշուառ հայրենակիցների անմեղ մանկանց հա-  
մար և որին սաւառնում էր իր սիրելի հայրենեաց  
ձիւնագագաթ Երանց վրայ, վախճանում է 1816 թ. Մադ-  
րասում 56 տարեկան հասակում:

Միիթարեան միաբանութիւնն այս անգամ անուշադիր  
չե թօղնում իրեն առաջարկուած պատիւն և Սամուէլի  
որդոց ու կտակակատարների՝ Եղուարդ և Յովհաննէս  
Մուրադեանների առաջարկութեան համաձայն, ուղարկում  
է իր միաբաններից Երկուսին՝ Սարգիս Թէոդորեան և Սու-  
քիս Սոմալեան վարդապետներին Հնդկաստան: Սակայն մին-  
չև սրանց Հնդկաստան հաօնելը, ժառանգներից ու կտակակա-  
տարներից մէկը, Պ. Յովհաննէս Մուրադեան, ուղևորում է  
իր ընտանիքով Եւրոպայ, իսկ միւս եղբայր Եղուարդը պատ-  
ճառ բերելով իր Եղբօր բացակայութիւնը, չի իրագործում  
իր հօր կտակը և վարդապետներն ունայն ձեռքերով 1820  
թ. վերադառնում են Վենետիկ, երկու տարի Մադրասում  
մալուց յետոյ:

Զորս տարի զուր տնցնելուց յետոյ՝ Սարգիս Թէոդո-  
րեան վարդապետը հանգուցեալ Սամուէլի տիկնոջ հրաւի-  
քանօք կրկին ուղևորում է դէպի Հնդկաստան՝ իրեւ գոր-  
ծակալ Միիթարեան միաբանութեան, սակայն կտակի վե-  
րաբերութեամբ չի կարողանում համաձայնութիւն կայաց-  
նել: Միիթարեան միաբանութիւնը աեսնելով, որ Մուրա-  
դեանները չեն կամնում իրենց հօր կտակն իրա-  
գործել, դիմում են անդշական օրէնքի օգնութեանը:

Թէոդորեան, Այվաղեան և Գալֆայեան հայրերը թող-նելով Մուրադեան վարժարանը, մասնաւոր կեանք են վարում Փարիզում. իսկ Մուրադեան վարժարանի այն սա-

**Մուրադեաններն երկեւղեց համաձայնում են առանձին դաշնադրութեամբ գործը վերջացնել հայր Թէոդորեանի հետ:**

Այս դաշնադրութիւնը տեղի է ունենում 1827 թուին և սրանով պէտք է Մուրադեան կտակի գործը վերջացած համարուեր, սակայն այդպէս չէ լինում. Մուրադեան եղբայրները գումարի կէսը վճարելուց յետոյ զղջում են և չեն կամենում մացածն ևս վճարել և հնարք են գտնում Թէոդորեան վարդապետին բանտարկել տալ. Հայր Թէոդորեանը բանտարկ բողոքում է Մադրասի անգղիական բարձրագոյն ատեանին, և ազատում է հարիւր օրեայ բանտարկութիւնից յետոյ: Վերջապէս նոյն բարձրագոյն ատեանը 1832 թ. վճռում է մացած գումարն ևս յանձնել հայր Թէոդորեանին: Դաշնագիրը կնքում է 1832 թ. մարտի 31-ին ու հայր Թէոդորեանը ստանում է կտակի ամբողջ գումարը, որ ստացած տոկոսի հետ ի միասին անում է մօտ երկու միլիոն ֆրանկ:

Մի տարի անցնելուց յետոյ Միիթարեանները Պատուայ քաղաքում մի դպրոց են հաստատում և անունը կնքում «Մուրադեան վարժարան»: Այս դպրոցի տեսուչ կարգում է Թէոդորեան վարդապետը: Սակայն շուտով Յով. Մուրադեանը Հնդկաստանից Եւրոպայ գալով՝ նորոգում է իր պահանջը, որպէս զի Միիթարեանները Սամուէլ Մուրադի կտակի գործադրման հաշիւը առն. և նրան յաջողում է աւստրիական արտաքին գործերի նախարար՝ հռչակաւոր Մետերնիխի միջնորդութեամբ ստիպմամբ հաշիւ պահանջել միաբանութիւնից: Միաբանութիւնն այդ հաշուետուութիւնից խոյս տալու համար պատրաստում է դըպրոցը տեղափոխել ուրիշ երկիր. հայր Թէոդորեանը գնում է Փարիզ և Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Գիզն թոյլաւութիւն է տալիս Մուրադեան վարժարանը աեղափոխել Փարիզ 1846 թ. հայր Թէոդորեանը Փարիզում 400,000 ֆրանկով գնում է մի մարզիզի պալատ և

ների ծնողներն, որ գաղափարակից և համակրող էին դը-  
րանց, հանում են իրենց որդոցը վարժարանից և նրանց  
խնամատարութեանը յանձնում:

200,000 նորոգման համար ծախսելով՝ այդտեղ տեղաւո-  
րում է Մուրադեան վարժարանը՝ ազատ ֆրանսիական դըպ-  
րոցական կանոնադրութիւններից և պետական հսկողութիւ-  
նից. 1846 թ. Հայր Թէոդորեանը ձեռք է բերում Լուի  
Ֆիլիպ արքայի երկու հրովարտակները Մուրադեան դպրոցի  
հաստատութեան վերաբերմամբ:

Միիթարեան միարանութիւնն այդ մեծածախս դպրոցը  
կառավարելու համար աարեկան ծախսում է 42,000 ֆրանկ,  
սակայն սկզբներում մի որոշ արդիւնք չէ տալիս, աշակերտ-  
ները, որ թուով 35 ին լինում, բերում են կոստանդնու-  
պօլից, սակայն ոմանք բոլորովին անպատճառ և ոմանք մի  
փոքր ուսման պաշարով, այնպէս որ Փարիզում հիմուած  
մեծանուն վարժարանը սկզբնական դաստիարակութիւն է  
տալիս նրանց, ուստի Թէոդորեան վարդապետը նախագծում  
է Պօլսում բանալ մի նախապատճառական տարրական դըպ-  
րոց, որի աշակերտներն աւարտելով՝ գնան Փարիզ և այն-  
տեղ գոնէ միջնակարգ դպրոցի դասընթացն ուսանեն:

1853 թ. Հռովմի պապը պահանջում է ֆրանսիա-  
կան պետութիւնից, որ Մուրադեան վարժարանը Հռովմ-  
փոխադրուի, սակայն Հայր Սարգիս Թէոդորեանն ամեն կերպ  
արգելք լինելով՝ յաջողում է ֆրանսիական կառավարու-  
թեան դիմադրութեան շնորհիւ չ'կատարել պապի և միա-  
րանութեան աբրամյ Հիւրմիւղեանի ցանկութիւնը: Եւ այս-  
պիսով լարում է Մուրադեան վարժարանի վերատեսչի և  
միարանութեան աբրամյի յարաբերութիւնը. իսկ վարժարա-  
նի ուսումնական մասի տեսուչ Գարբիէլ վարդապետ Այվա-  
զեանի Զմիւռնիայի «արշալոյս Արարատեան» թերթի մէջ  
հրտարակած մի նամակն առիթ է լինում նրա Մուրա-  
դեան վարժարանից և նաև Միիթարեան միարանութիւնից  
արտաքսուելուն: Այս դէպքից յետոյ Թէոդորեանի և Հիւր-  
միւղեանի գժառութիւնն աւելանում է և վերջանում է նրանով,  
որ 55 թ. ապրելին ծերունի Սարգիս վարդապետ Թէոդորեա-

Այսպիսով հարք Թէոդորեան, Այվազեան և Գալֆայեան ծրագրում են Փարիզում հիմնել մի նոր դպրոց իրենց լիակատար իրաւանց ներքոյ՝ «Հայկագեան» անունով, սակայն յաջողութիւն չեն ունենում:

Մուրադեան վարժարանի մի խումբ Մոլդավացի սաներն իրենց ծնողների կամքով նոյնպէս թողնում են վարժարանը և ապավինում իրենց նախկին և սիրելի դարձած տեսուչներին. ահա այս երիտասարդ ուսանողների մէջ է լինում նաև Ստեփան Պալասանեան որբ աշակերտը, որի ուսման վճարի համար դիմում են Բօդուշանի հայոց աղգային կառավարութեան: Բօդուշանի հայոց աղգային վարչութեան ուղարկուած այս թղթի մէջ ևս յիշում է, որ ուսանող Պալասանեանն ունեցել է մի «մասնաւոր բարերար» Կոյլաւեան Գասպար անունով: Բօդուշանի հայոց աղգային հոգաբարձութիւնը յարգելով Այվազեան վարդապետի և իր ընկերների միջամտութիւնը՝ վճռում է աղգային գանձարանից երեք հազար (3000) ֆրանկ վճարել Ստեփան Պալասանեանի երկու տարուայ ուսման և ապրուատի համար.—այս գումարն յետոյ հանգուցեալ Պալասանեանն ու իր եղբայրները վճարում են Բօդուշանի աղգային գանձարանին:—Յառաջ ենք բերում Այվազեան Գարդիէլ վարդապետի Բօդուշանի աղգայիններին գրած թղթի պատճէնը, որ հանուած է Բօդուշանի հայոց աղգային դիւնից.

#### «Մեծապատիւ Աղաներ»

Աղգային կառավարութեան Հայոց Պօթուշանի.

«Մուրադեան վարժարանին ցաւալի վիճակին պատճա-

նին դատարանի և զինու զօրութեամբ հեռացնում են իր հիմնարկած վարժարանից, որովհետև նա իր սաներին կը թում էր հայկական ոգուվ և ոչ թէ զուտ կաթողիկական, որ հարկաւ հաճելի չէր կարող լինել Հռովմին:

ռաւ, ըստ հրամանին Յակոբ Աղայի Տըլյըլեան, Խոայի Աղայի Դրանկարութեանց և Կարապետ Աղայի Խաչիկեան և Աստուածատուր Աղայի Մսերեան, իրենց որդիքը հանեցինք այն վարժարանէն ու առ այժմ դրինք մէկ դպրոց մը ուր պիտի կառարելագործեն իրենց ուսմունքը մեր հոգաբարձութեանը տակ. այն Մոլտաւիացի պատանիներէն չէինք կրնար զտաել նաև Պալասանեան Ստեփան սնունով որբ տղան, յուսալով թէ մէկ երկու տարեկան ծախիքը իր աղդականներն ու բարեկամները կամենան վճրելու. ինչպէս որ մեր ազնիւ բարեկամ Յակոբ Աղան ալ յոյս կուտար:

Այս օրերս Մսերեան Աստուածատուր Աղան խոսացաւ որ նոյն Ստեփան պատանւոյն շամար տարին 200 ֆըրանք ինքը վճարէ. բայց որովհետեւ անոր տարեկան ծախիքը 1500 ֆրանքէն պակաս չըլլար, մեզի պարտք համարեցանք այս բանս ծանուցանել ոչ միսյն Կօյլաւեան աղդասէր Գասպար Աղային՝ որ աշուն մասնաւոր բարերարն է, այլ և մեծապատիւ Ազգային կառավարութեան Քաղաքիդ. և Խընդրել որ այս բարերարոյ եւ ուսումնասէր պատանւոյն գոնէ երկու տարուան վճարքը հոգացուի, որով ուսմունքը անկատար չմայ, այլ մանաւանդ երբոր դառնայ իր հայրենիքը՝ կարող ոլլայ օգտակար ըլլալու իրեն ընտանեացը ու նաեւ բաղաքակցոցը՝ վարժապետութիւն ընելով կամ թէ ուրիշ որևիցէ պաշտօնով:

Պօթուշանի Ազգային կառավարութեան ողորմանութիւնն ու աղդասիրութիւնը յօյս կուտայ մեզի որ աս ազնիւ պատանին չի մար երեսի վրայ, այլ կը գտնէ իրեն հայրենակից Աղաներուն առատաձեռնութենէն աս պէտք եղած տարեկան վճարքը 1500 ֆրանք, ու յաւիտեան երախագէտ կըլլայ իրենց և Աս ուրախարար որոշման կը սպասնենք օրէ օրէ:

Միանգամայն կը ինդրենք, մեծապատիւ Աղաներ, որ եթէ յանկարծ անկարելի երևնոյ Շեզի աս աղաչանքիս կա-

առարումը (որ մենք չենք կարծեր), որչափ կարելի է շուտով իմացընէք մեզի՝ որպէս զի պարաբի տակ չմնանք, ուժամ մը առաջ զբկենք զպատանին իրեն հայրենիքը, թէ պէտև ցաւով սրտի:

ՈՂՋ ՄԻՆԵԼ ԿԸ ՄԱՂԹԵՆՔ  
ՄԵԽԱՊԱՏԻՒ ԱՂՅԱՆԵՐՈՎԴ

Ի Փարիզ, 12 յունիսի 1855 թ.

Խռնարհ ծառայք

Հ. Գաբրիէլ վարդապետ Ալվագովսքի,

նաև ի դիմաց

Հ. Սարգսի վարդապետի Թէոդորեան,

և

Հ. Ամբրոսիոսի վարդապետի Գալֆալեան:»

1858 թ. երիտասարդ Ստեփաննոսն իր ուսման ընթացքն աւարտելով գնում է իր ծննդավայր Բօղուշան քաղաքը և նոյն տարին, հոկտեմբեր ամսին, Թէոդոսիայի նորաբաց Խալիֆեան ուսումնարանի հիմնադիր Գաբրիէլ Ալվագովսկին հրավիրում է նրան՝ իր նախկին աշակերտին, ուսուցչական պաշտօն վարելու այդ դարրոցում:

Քսան ու մէկ տարեկան վառվուն երիտասարդ Ստեփաննոսն իրեն յատով ոգևորութեամբ նուիրում է իր գործին և օգտում է Գ. Ալվագեանի նման հմուտ գիտնականի բարեկամական աջակցութիւնից: Մուրադեան և Հայկագեան դարրոցները թէն նրան բարձրագոյն կըրթութիւն չէին տուել, սակայն նա կատարելապէս գիտէր հայերէն և ֆրանսերէն լեզուները և շարունակ կատարելագործում էր իր անզուգական հայկաբան ու լեզուագէտ ուսուցչի ղեկավարութեամբ:

Աղաս Ժամերին Պալասանեանը պարապում էր նաև արդի գրականութեամբ և յօդուածներ էր զետեղում «Մասեաց Աղանի» հանդիսում:

Սակայն Պալասանեանի պաշտօնավարութիւնն երկար չէ տևում Խալիպեան դպրոցում. սկսում են Խալիպեան—Հայրապետեան յայտնի կուսակցութիւնների կոփուները և տաքարին Ստեփաննոսն էլ զանազան պատճառներով գժուում է Այվազեան եպիսկոպոսի հետ և 1861 թուին թողնելով Խալիպեան դպրոցն ու Թէոդոսեան, Հայրապետեան կոչուած կուսակցութեան հրաւէրով գնում է նոր-Նախիջևան՝ ընկերակցութեամբ Ստեփաննոս Շիշլիկեանի և Համբարձում Իվելճեանի։ Հայրապետեան կուսակցութիւնը հակակրելով թէ Գ. Այվազեան եպիսկոպոսին և թէ նրա հիմնարկած Խալիպեան վարժարանին, այդ երեք գործունեայ երիտասարդներին միջոց է տալիս նոր-Նախիջևանում մի նոր աղբային դպրոց բանալու։ Դրաբ-րոցը բացում է և կառավարուում Շիշլիկեանի ղեկավարութեամբ։ Սակայն Այվազեանը չէր կարող հաշտ աչքով նայել հակառակ կուսակցութեան գործունէութեան վրայ։ Նորաբաց դպրոցը վտանգաւոր է համարում Խալիպեան ուսումնարանի գոյութեան համար և թեմակալ Սրբազնը միջոցների խորութիւն չէ անում իր նպատակին հասնելու, այսինքն նորաբաց դպրոցը կործանելու համար։ Հետեանքն այն է լինում, որ 1863 թ. վերոյիշեալ երեք ուսուցիչներն Եկատերինոսլաւի նահանգապետից հրաման են ստանում 24 ժամուայ ընթացքում թողնել նոր-Նախիջևանը։ Նրանք անմիջապէս ցրում են և Պալասանեանը դալիս է Տփխիս։

Սկզբում երիտասարդ ուսուցիչը մամնաւոր դասեր է տալիս Տփխիսի հայ ընտանիքներում, բայց իրրե լուռ, զգոյշ և համեստ մարդ չատերից յարգանք է վայելում և հաստատ քայլերով առաջ գնում։

Նոյն թուականին Պալասանեանը հրավիրում է ուսուցչի պաշտօնով Ներսիսեան դպրանոց և այդ օրից արդէն հետզհետէ յաճախակի է լսում նրա անոնքը սակա-

աթիւ հայ գրագէտների շրջանում։ Այդ միջոցին Ցփխիսում վկումների, «Մեղուա-ի» և Պետրոս Շանշեանի շրջաններից դուրս շատ սակաւ էր հայախօսների և նաև մանաւանդ հայերէն օրինաւոր գրել իմացողների թիւը, այդ պատճառով Պալասանեանն իրեւ հոչակաւոր հայկաբանների աշակերտ և լաւ հայագէտ շուտով յայտնի եղաւ ազգային-հասարակական խնդիրներով զբաղուտղ շրջաններում։

Նա ընակում է «Մեղու Հայաստանի» լրագրի խըմ-բագիր/<sup>Պ.</sup> Պետրոս Սիմէոնեանի հետ ի միասին և ուսում-նասիրում է մեր, արևելեան, նոր գրականական լեզուն, որովհետեւ իր գիտեցած և գործադրած արևմտեան բար-բառով դժուար էր մեր գրականական ասպարիզում ճա-նապարհ հարթել և Ցփխիսի հասարակութեանը մատչելի լինել։

Արարատիան բարբառի համն ու հոտը Պալասա-նեանն առաջին անգամ առնում է Խաչատուր Աբովեանի «Վէրք Հայաստանի» անմահ գրուածքից և ապա դառնում է մեր աշխարհիկ լեզուի մշակողներից մէկը՝ հրատարա-կելով այդ բարբառի քերականութիւնը, որ մինչև այժմ էլ չոնի իր հաւասարը։<sup>1)</sup> Լեզուագիտական ընդունակու-

<sup>1)</sup> Այդ աշխատութեան վերնագիրն է. «Ընդհանուր տեսութիւն Արևելեան նոր գրաւոր լեզուի հայոց» և հրա-տարակուած է 1870 թ.։ Այդ աշխատութեան յառաջա-բանում հեղինակը յիշելով, որ օգուտ է քաղել նաև Հ. Արսէն Այարնեանի «Քննական քերականութիւն»-ից, համես-տաբար ասում է. « . . . մեր միաբը չէ ամենեին քերա-կանութիւն գրել. այդ յանդանութիւնը հեռու է մեզանից, միտ դնելով այն դրութեան, որի մէջ գանւում է մեր մա-նուկ լեզուն։ Մեր գիտաւորութիւնը եղել է միայն լեզուի գլխաւոր ու ամենասովորական ձևերը մէկ տեղ՝ հաւաքել. գուցէ այս փոքրիկ աշխատութիւնը յորդոր լինի աւելի».

թիմն ունենալով և լաւ ուսումնասիրած լինելով գրաբարն և արևմտեան աշխարհիկ լեզուն, նա շուտով ըմբռնում է արարատեան բարբառի ոպին։ Պալասանեանն իր աշխատասիրովմեամբ ու դէպի աղքային լեզուն ու մատենագրովմիմն ունեցած սիրով մի այնպիսի սիրուն, վայելուչ ու սահուն ոճ է ստեղծում իր գրչով, որ մեր այժմեան հայագէտների ու մատենագիրների համար ևս կարող է նախանձելի լինել։

Նա իր տոկուն աշխատասիրովմեամբ սովորում է նաև ուսերէն լեզուն և կարգտամ է Տփխիսի ոէալական դպրոցում ֆրանսերէն ու հայերէն լեզուների ուսուցիչ-այդ առիթով և ընդունում է ուսահալատակովմիմն։ Մի առ ժամանակ այդտեղ պաշտօն վարելուց յետոյ այդ դպրոցի վարչովմիմը վկայական է պահանջում Պալասանեանից, սոյն պահանջն առիթ է տայիս նրան մտածելու Պետերբուրգ գնալ և համալսարանի արևելեան լեզուագիտական բաժնում քննովմիմն տալ. Պ. Պ. Սիմէօնեանի միջնորդովմեամբ նա դիմում է հանգուցեալ ուսուցչապետ Ք. Պատկանեանին, սակայն պատասխան է ստանում, որ համալսարանում քննովմիմն տալու համար անհրաժեշտ է ունենալ գեմնազիական վկայական։

Գիմնազիական վկայաթուղթ չունենալով Պալասանեանը թողնում է Պետերբուրգ վնալու միտքը, սակայն չէ յուսահատում և իր բարեկամ Խանժիկսի օգնութեամբ, որ այդ միջոցին տեղոյս առաջին գիմնազիայի տեսուչն էր, գիմնազիայում քննովմիմն է տալիս և ձեռք է բերում անային ուսուցչի վկայաթուղթ։ Թէև նոյն միջոցին նա

մանրամասն գիտողութիւններ գրելու նոցա՝ որոնց բաղցը ու սիրելի է մայրենի լեզուի յառաջադիմութիւնը։

Նա ունի հրատարակած նաև «Գործնական բերականութիւն»։

ուսուցիչ էր նաև ներսիսեան դպրոցում, սակայն երեխ թէ այստեղ քիչ դաս ունենալու պատճառով ստիպուած էր նաև այլ տեղ պաշտօններ որոնել:

Իր տասնեւութամեայ պաշտօնավարութեան ժամանակ Պալասանեանը ներսիսեան դպրոցում ուսուցել է. հայոց լեզու, հայոց պատմութիւն, հայոց գրականութիւն, ընդհանուր գրականութիւն, ընդհանուր պատմութիւն և ֆրանսերէն: <sup>1)</sup>

Թէ՛ւ նա մասնագէտ մանկավարժ չէր, սակայն գիտէր վարուել աշակերտների հետ և իր առարկան սիրելի դարձնել. դասատութեան ժամանակ նա լուրջ և խըտապահանգ էր, բայց ինքն ևս պատրաստ էր պարզել ու համբերութեամբ բացատրել այն, ինչ որ դժուար ըմբռնելի էր աշակերտներին: Առհասարակ նա լաւ և ընտիր ուսուցչի հոչակ էր վայելում:

1869 թ. մի խումբ երիտասարդներ ոգևորուած հայ աղջկանց աղջային դաստիարակութեան գաղափարով իրենց ջանքով ու սուղ միջոցներով հիմնարկեցին սուրբ Գայիանեան օր. դպրոցը. այդ խմբի մէջն էր նաև Պալա-

1) 1865 թուին Պալասանեանը հրատարակում է նաև մի ձեռնարկ ֆրանսերէն լեզուի համար, դրա կարեւորութիւնը գրքի յառաջաբանի մէջ այսպէս բացատրելով.

« . . . Մի այնպիսի դասական գիրք, որով հայ պատանիները հայերէն լեզուի միջնորդութիւնով կարող լինեն ֆրանսերէնը սովորել, պէսք և ասել, մինչև այժմ չկայ մեղանում: Այս պահասութիւնը ըստ մասին լրացնելու համար՝ հրատարակում ենք ահա ներկայ գրքով: ըստ մասին, ասում ենք, որովհետեւ մեր նպատակը առ այժմ ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ մի սկզբնական ձեռնարկ առ հայ մանուկների ձեռքը, որով կարող լինին նրանք կարճ միջոցով միջնորդում ֆրանսերէն անսխալ կարդալ, բեշ շատ հասկանալ և մինչև անգամ թեթև խօսակցութեան մէջ վարժուիլ»:

սանեանը, որև այդ դպրոցի վարչութեան մէջ կրեց «հիմնադիր» անդամի անունը և հինգ տարի ձրի դասաւութիւն էր անում (69—74)։

Պալասանեանը յարգուած էր նաև իր պաշտօնակիցների շրջանում իրրև լուսամիտ, եռանդու, ներողամիտ, աշխատասէր և պարտաճանաչ անձնաւորութիւն։ ընկերական շրջանում նրա թերութիւնն էր համարւում նրա վերին աստիճանի և ժլատութեան հասնող խնայողութիւնը, սակայն այդ էլ իր հիմքն ունէր։ Նրա ձգտումն էր՝ իր կեանքի վերջին տարիներն անցկացնել Պարիզում և միմիայն գրականութեամբ զբաղուել։

Տփխիսում Պալասանեանն ամուսնացաւ բանաստեղծ Գէորգ Բարիսուբարեանի քրոջ հետ, սակայն վերջինս կանխահաս մահուամբ ի Ցէր հանգեաւ և իրրև միակ մխիթարութիւն վշտահար Պալասանեանին թողեց մի փոքրիկ դուստր, Պալասանեանն յետոյ երկրորդ անգամ ամուսնացաւ, սակայն այլևս ուգիշ դաւակ չունեցաւ։

Պալասանեանը Տփխիսում մնալով՝ անընդհատ պաշտօն է վարում ներսիսեան դպրոցում մինչև 1881 թ. այդ թուին Գէորգ Դ. երջանկայիշատակ կաթողիկոսը հրավրում է նրան սուլք էջմիածին՝ ճեմարանում հայոց պատմութիւն և ֆրանսերէն դասաւանդելու։

1883 թուին ճեմարանի ուսուցչական խումբը և աշկերտները, ճեմարանի դահլիճում, համեստ հանդիսով տօնում են Պալասանեանի քսանեւհնգամեայ ուսուցչական գործունէութեան յօբելեանը և այդ առթիւ Գամառ Քաթիպան նուիրում է նրան «հայ վարժապետ» գեղեցիկ և խորին միտք պարունակող հետևեալ բանաստեղծութիւնը։

## ՀԱՅ ՎԱՐԺԱՎԵՑ

(Ս. Պայտանեանի 25-ամեայ յօրելեանին):

Բաղրը եւ ներթը, գիտեմ, կը հասմիմ  
 Ջեղեցիկ մի օր չայ գործիշներին,  
 Մորի կը կանգնեն մեր որդիքըն էլ,  
 Ե՛ռզենամ ազատ մարդոց կարգ մըսմնի:  
 „Մենենք, կանք, մենք կրօն եւ ազգութիւն“:

Եւ անա մեր չայ հարուստ մեծատունը,  
 Կապալտուններ, եպիսկոպոսներ,  
 Զենք ու զարդարով ըսպայր ու զիմուորք,  
 Փայտուն կոնսակով աստիճանաւորք,  
 Կըսկըսնեն պահծալ, իրանց դրուտնչ  
 Թիկ՝ „այս բոլորը մենք ենք ձեռք բնրելու“:  
 Մի կաղենայ, դափնենայ դայար պըստիններ  
 Կը զարդարեն շատ ցուզի մակատներ:  
 Մըստրից էլ չ'անցնիր, Մտեփաննո՞ս եղբայր,  
 Այդ խոշոր մարդոց սուսու-պարծուկ կամառ,  
 Որ օդ կարծեցած մեր հայրենիքին  
 Որ ուսիր, մարմին ու արիսն տըսին.  
 Ով տըսեց լեզու անեզու ազգին,  
 Կազդուրեց սիրտը, վերածնեց հոգին,  
 Մըկըրտեց նոցա այն անազունում,  
 Որի, մեր օրով, դըպրոց է անուն.  
 Որք արիսն-բրտինք արին վար ու ցան—  
 Հընձուդրը նոցա անունը մոռցան.  
 Հիմնադրի նորշակ նորա ըստացան,  
 Որք հիմքի վըրայ բնաւ չ'աշխատեցան.  
 Իսկ որ ժիր, տոկուն մշակ էր ազգին  
 Եւ անարարակուի չունեցան նա գին.  
 Զի նորա անունն է „հայ վարժապետ“—  
 Հայ ժողովորդի պաշտօնեայ ունակու:

Խ. ՊԱՏԿԱՆԵԱՆ:

Իսկ 1888 թուիննոյն ճեմարանի ուսուցչական խումբը և աշակերտները անկեղծ կերպով չնորհաւորում են նրա երեսնամենայ ուսուցչական գործունէութեան տարեդարձը՝ ցանկանալով նրան դեռ երկար տարիներ առողջութիւն և եռանդուտ ու ազգօգուտ գործունէութիւն։

Մակայն տարաբաղդաբար նախախնամութիւնն ուրիշ կերպ էր տնօրինել. յաջորդ թուի փետրուարին, կարճատես հիւանդութիւնից յետոյ, վախճանուեցաւ հայ գրականութեան անխոնջ մշակը՝ 52-ամեայ հասակում՝ սգաւոր թողնելով ամուսնուն, դստերը, պաշտօնակից ուսուցիչներին և բազմաթիւ աշակերտներին։ Հանգուցեալի մարմինը՝ վերջին պատշաճաւոր յարգանքներն ընդունելուց յետոյ, թաղուեցաւ սուրբ Գայիանէի վանքի բակի հիւախ արևելեան կողմը։

Համեստ գործչի անշուր դամբարանը դեռ ևս շատ սերումների համար սուրբ էջմիածնայ ուստատեղիներից մէկը կհամարուի, որովհետեւ Պալասանեանի գործունէութիւնը չէ սահմանափակում միմիայն ուսուցչութեամբ, որպէս զի միայն իր ընկերակիցներն ու աշակերտները յիշէին նրան. այդ դէպքում գուցէ նրա խօսքի հետ դադարէր նաև ազդեցութիւնը, սակայն Պալասանեանի գրիչն ևս բեղմնաւոր և ոգևորիչ է հանդիսանում, ինչպէս և խօսքը. գրիչ արդիմքն աւելի շատ սերումների սրտերն է տիրապետում քան խօսքինը։

Պալասանեանի եռանդուն և սահուն զրիշը չէ դադարում գործելուց. բացի իր երկասիրութիւնները հրատարակելուց, նա շարունակ գրում է ժամանակակից օրաթերթերի ու հանդէսների էջերում՝ լազգային ու հասարակական խնդիրների մասին. Թէոդոսիայում աշխատակցում է «Մասեաց Աղաւնուն», գալով Տվիսիս՝ գրում է «Կուռնկ» ամսագրում—որի մէջ ի միջի այլոց լոյս տեսաւ Պալասանեանի թարգմանութեամբ Վիկտօր Լանդ-

լուայի մի հետազօտութիւնը Մովսէս խորենացու պատմութեան աղբիւրների մասին—և «Մեղու չայաստանի» լրագրում—մի ամառ, «Մեղու»-ի խմբագիր պ. Պ. Սիմէոնեանի բացակայութեան միջոցին, վարում է նաև ժամանակաւոր խմբագրի պաշտօն—։ Ապա երբ հրատարակում է «Մշակուր» և «Մեղու»-ն երկու ամսով դադարում, Պալասանեանն էլ ուրիշների հետ սկսում է աշխատակցել «Մշակուր»-ին և հսկելով լրագրի լեզուի վրայ ընդհանրապէս, մամնաւորապէս խմբագրում է թերթի բանասիրական բաժինը։ Սակայն նրա ամենահմտավից ու մշակուած յօդուածները լոյս տեսան պ. Արգար Յովհաննիսեանի հրատարակած անզուբական «Փորձ»-ում և կարող են մեր առօրեայ մատենագրութեան ամենաժանկագին զարդը կազմել։ «Փորձ»-ի մէջ լոյս տեսան նաև նրա «Գրիչ» ստորագրութիւնը կրող մատենախօսական յօդուածները, որ նոյնպէս հաւասարը չունեցաւ ցայժմ։

«Փորձ»-ը դադարելուց յետոյ Պալասանեանը՝ շատ քիչ է գրում, միայն վերջերը նրա մի քանի յօդուածները լոյս տեսան «Վարժարան» ու «Ըրարատ» ամսաթերթերում։

Պալասանեանն իբրև հասարակական գործիչ՝ նպաստում է նաև Թիֆլիսի հայ թատրոնական գործին՝ սըրբագրելով ու խմբագրելով զանազան թարգմանական պիէմներ և անձամբ թարգմանում է ֆրանսերէնից Վիկտոր Հիւգոյի «Էրնանի» կոչուած թատրերգութիւնը, որև ներկայացում է հայ բեմի վրայ։

Իբրև դասատու հայոց պատմութեան և մատենագրութեան<sup>1)</sup> նա քաջ գիտէր, որ չպատմական գիտութեան

<sup>1)</sup>) Պալասանեանն իբրև գրականութեան ուսուցիչ հրատարակեց նաև գրականութեան պատմութեան մի ձեռնարկ, որ կազմած էր վաթսունական թուականներին յայտնի Կիչէնկոյի դասագրքի հետևողութեամբ։ սակայն սյդ գործը

հմտութիւնն ընդհանրապէս և հայ հեղինակների ողու և ուղղութեան ծախօթութիւնը մամնաւրապէս՝ անհրաժեշտ են հայոց պատմութեանը մի որ և է ծառայութիւն մատուցանել ցանկացողի համար. նա տեսնում էր, որ պատմական գրականութիւնը, որի կրթողական նշանակութիւնըն ապացոյցի կարօտ չէ, համարեա անմշակ դրութեան մէջ էր մեղանում, իսկ ազգային պատմութիւնը տակավին մանկական վիճակի մէջ <sup>1)</sup>:

Իսկ մեր գրականական նոր լեզուն աւելի թշուառ դրութեան մէջ էր. գրոց կամ գրաբար լեզուի պաշտպանները հալածում էին նոր լեզուի ախոյեաններին. իսկ նոր լեզուի ախոյեաններն իրենց չափազանց եռանդից ծայրահեղութիւնների մէջ էին ընկնում և այնպիսի ինքնահնար ձևեր մտցնում լեզուի մէջ, որ նրա հոգուն հակառակ էին:

Սհա այս բոլորը տեսնելով, Պալասանեանը հոգուվ ու սրտով նուիրում է ազգային պատմութեան ու գրականութեան և աշխարհիկ լեզուի ուսումնասիրութեան և մշակութեան գործին, Գրաբար ու աշխարհաբար լեզուի պաշտպանների չափազանցութիւնները մերժելով նա իր տոկուն աշխատասիրութեամբ և ըմբռնման ընդու-

---

**Թերի Ֆաց, որովհետև հրատարակուեց միայն «Բանաւոր գրականութիւնը»:**

1) Պալասանեանի «գլուխ գործոցը» նրա «Հայոց պատմութիւնն» է, որ տասնեակ տարիների բրանազան աշխատութեան արդիւնք լինելով իր մահից յետոյ միայն հրատարակուեց «հրատարակչական ընկերութեան» միջոցով 1889 թուին և պյժմ արդէն երկրորդ տպագրութեամբ մի քանի հազարներով ցրւում է հայ ժողովրդի բոլոր խաւերի մէջ: Եւրաքանչեւր հայի սեղանի զարդը պէտք է լինի այդ գիրքն պյժմ և անշագ կարդացուի:

Նակութեամբ մշակեց աշխարհաբարի մի գողտրիկ, սահով և քաղցրահնչին ոճ։ Նա իր բեղմնաւոր ըննադատութիւններից մէկի<sup>1)</sup> մէջ ասում է. լեզուն անհոգի ու անկենդան նիւթ չէ, որ կարելի լինի նրան մեր ուղածին պէս մէկ կաղապարի վրայ ձևել. նրա բոլոր ձեմրը մէկ կանգունով չափել։ Լեզուն հոգի է, կենդանութիւն է, ստեղծագործութիւն է. ստեղծագործութիւնն ազատութիւն է սիրում, նրան չէ կարելի բռնաբարել կամ շղթայել, սառն կանոնների ու միակերպութեան տակ ձգելով……

Պալասաննեանը դպրոցի մշակ լինելով, քարոզում է ազգային գաստիարակութիւն<sup>2)</sup>). Նա կամենում է հայ ժողովրդին հասկացնել, որ եթէ դպրոցն առհասարակ անհրաժեշտ է, մեզ համար նա կեանքի ու մահուան խնդիր է, մի խնդիր՝ որի հետ սերտ կապուած է մեր լեզուի գոյութիւնը, ազգային կեանքի այս ամենահաստատ սիւնը։ Ներկայումս դժուար թէ գտնուի մի հայ հասարակութիւն, որքան էլ սակաւատը լինի, որ համոզուած չինի թէ տպիտութիւնը մեր ամենամեծ թշնամին է, որի դէմ պատերազմելու միակ միջոցը դպրոցն է. դպրոցից է կախուած ազգի ու եկեղեցու փրկութիւնը։

Դպրոցի հետ ի միասին Պալասաննեանն ազգային լեզուի և ազգային պատմութեան ուսումնասիրութիւնը համարում է մեր ազգի կեանքի և մահուան խնդիր<sup>3)</sup>։ Նա կշտամբում է անվերջ ու յուսահատ երեմիաներ կարդացողներին, որոնք բացի վնասից ոչինչ օգուտ չեն բե-

1) Մինաս Զերազ, գրական փորձեր. տես. «Փորձ» Ա. տարի № 2. էջ 358—368։

2) Տես. Ազգային կրթութիւն յօդուածը. «Փորձ» Ա. տարի № 4. էջ 89—160։

3) Տես. «Փորձ» Բ. տարի № 3. էջ 285—311։

րում. բաւական է, Նստուծոյ սիրուն, որքան ողբացիք ազգի անմիաբանութեան և թշուառութեան վրայ. Ցոյց տուէք ընդհակառակը՝ թէ այդ առակ դարձած անմիաբանութիւնն ոչ թէ հայ բնաւորութեան յատկանիշն է, այլ հետևանք է պատմական և տեղագրական անյաջող պայմանների, թէ մեր թշուառութիւնն ընդհանրապէս նախընթաց պատճառների անհրաժեշտ արդասիքն է։ Հիացէք այդ ազգի բարոյական զօրութիւնների վրայ, որ անտանելի տանջանքներ կրելուց յետոյ, միշտ անօդնական և հալածուած լինելով, ցրուած ու զատուած, կարողացաւ պահպանել իր ազգային ինքնուրոյնութիւնը։ Կասկածական աչքով մի նայիք հայի ապագայի վրայ, այլ համեմատելով նրա երեկուան վիճակը՝ երբ չդեռ անշարժ ընկած էր գետնին, այսօրուան դրութեան հետ՝ երբ գիտակցութեան կայծը սկսում է տաքացնել նրա թմրած հոգին, ցոյց տուէք որ պէտք է կատարեալ վստահութիւն ոմենայ վաղուան աւուր վրայ։

Եւ Պալասանեանը վերացական կերպիւ չէ դատում, այլ նա այդ ասում է՝ ուսումնասիրելով հայոց անցեալը<sup>1)</sup>). Նա աշխատում է հայոց բևեռագրերի բովանդակութիւնը կապակցել մեր տոհմային պատմագրութեան հետ և մեր նախնեաց անկախութեան ձետմանց մասին խօսելով զատագովում է Մ. Խորենացուն, որ չ'նայելով իր վարքին ծերութեանը, զարմանալի փափուկ սրտի և ոգլածուող բնաւորութեան տէր մարդ է. նա հայոց թագաւորութեան հաստատութեամբն այն աստիճան է յափշտակուում, որ «Երանէ կը լինէր ինձ, բացականչում է նա, եթէ Փրկիշն այն ժամանակ աշխարհ եկած և ինձ գտած լինէր, որ

<sup>1)</sup> «Մի հայեացք հայոց նախնական կեանքի վրայ» տես.  
«Փորձ» Ա. առարի № 2. էջ 118—144։

ես էլ հայկաղուն թաղաւորների ժամանակ ապրէի, նրանց տեսութեամբն ուրախանայի... <sup>1)</sup>:

Պալասանեանն ուսումնասիրելով մեր պատմութիւնը, այն եղրակացութեան է գալիս, որ թէև հայաստան աշխարհն իր գոյութեան ամենաընդարձակ շրջանում, ամենից զօրաւոր, ծաղկեալ և յառաջադէմ երկիրը չէր, այնուամենայնիւ նա իր նշանակութիւնն ու տեղն ունէր ասիական ազգերի խմբի մէջ. հայկաղուն իշխանների ու թագաւորների, դաշնակցութեանն ու միջնորդութեանը դիմեցին միշտ հին աշխարհի մեծամեծ աշխարհականներն այն նշանաւոր խնդիրների համար, որնք ազգերի բաղզը վճռեցին: Հայ ազգը թէև միշտ պատած է եղել իրենից աւելի զօրաւոր ու կարգաւորեալ պետութիւններով, այնուամենայնիւ միշտ գիտացել է իր արժանաւորութիւնը պահպանել տուրք ձեռին անընդհատ կռուելով իր անկախութեան և ազգային միութեան համար:

Պալասանեանի պէս ուսումնատենչ հայ մարդը հարկաւ չէր կարող անուշադիր թողնել այն հսկայական մըտաւոր ձգտումը դէպի վերածնութիւն, որ տեղի ունեցաւ հայոց մէջ հինգերորդ դարում և ահա նա գրում է «Հայոց մտաւոր շարժողութիւնը հինգերորդ դարում» <sup>2)</sup>, որի մէջ հայ երիտասարդների բուռն ցանկութիւնն է նկարագրում դէպի ուսումն և ազգային վերածնութիւնը: Խնչպէս մի գետ, որի ջրերն երկար ժամանակ արգելուելով բարձրացած թումբը խորտակում, առաջ են մղում, այսպէս և հայոց աշխարհի թարմ և նորաբոյս ոյժերը աղիտութեան թմբից ազատուելով, որ դարեւոր ժամանակներ թանձր խաւարի մէջ էր պահել իրենց հայրերին, մէկը

<sup>1)</sup> Տես. Մ. Խորենացի. գիրք առաջին, գլուխ ԻԲ.  
Էջ 70:

<sup>2)</sup> Տես. «Փորձ» Բ. առքի Խ 3. Էջ 1—68:

միւսից առաջ էին վազում մտաւոր մնունդով իրենց քաղցըյագեցնելու։ Ոչինչ էր երևումնրանց աշքին հայրենիքից բաժանուել, տարիներով հեռու մնալ ազգականներից ու սիրելիներից, որովհետև այդ կամաւոր պանդխտովթիւնն իրենց սիրելի հայրենիքի օգտի համար էին յանձն առնում։ Ի՞նչ բան է ոգևորովթիւնը. այն միջոցին, երբ չայաստանը քաղաքականապէս բաժանուած էր և հեռատես մարդիկ տեսնում էին նրա մօտակայ անվումը, մի խումբ եռանդում երիտասարդներ ձգտում էին յունական քաղաքակրթութիւնը տեղափոխել չայաստան, Վաղարշապատը դարձնել երկրորդ Աթէնք և Աղէքսանդրիա։ Ապա խօսելով Մ. Խորենացու, Դաւիթ Անյաղթի և այլոց վրայ, Պալասանեանը յիշում է իր երիտասարդական գեղեցիկ և բարձր իդէալական ձգտումները։ Ով իր երիտասարդութեան տարիներն անց է կացրել արևմտեան քաղաքակրթութեան կենդրոններում այն նապատակով, որ մի որ և է կողմից օգուտ տայ այն հասարակովթեանը, որի մէջ սահել են իր մանկովթեան օրերը, նա հեշտովթեամբ կարող է հասկանալ թէ որպակի ցանկովթիւններով ոգևորուած պիտի լինէին Սահակի և Մեսրոպի աշակերտներն իրենց երկար ճանապարհորդովթիւնից յետոյ չայաստան վերադառնալիս։ Երևակայեցէք ազգի յառաջադիմութեան իդավան վառուած վաթսուն հայ ուսումնականներ, որոնք իրենց երկարատև պանդխտովթեան և տոկոն աշխատասիրովթեան վարձը ստացած՝ ոտք են կոխում հայրենի հողի վրայ։ Ի՞նչ պիտի լինէր նրանց դիտաւորովթիւնը՝ եթէ ոչ իրենց ամբարած թանկագին գանձը—ուսումն և գիտովթիւնը չայաստանի մէջ ծաւալել։ Վաղարշապատը նրանց շնորհիւ պիտի դառնար մի նոր կենդրոն, մտաւոր կեանքի հնոց, որտեղից լուսաւորովթեան ճառագայթները պիտի տարածուէին ամբողջ երկրի վրայ։ Նրանք մէկ սիրտ ու մէկ հոգի եղած ուկտեցին իրենց աշխատովթիւնը շը

լմնայել ազգի օգտի համար։ Քաղաքական կեանքի անկումը մեծ արգելվ չէր երևում նրանց անընկճելի արիութեան, նրանց մեծ ոգևորութեան առաջ, որ արդէն վարդապոյն գոյներով էր տեսնում հայ ազգի մտաւոր վերածնութիւնը։ Պալասանեանի զգայուն սիրտը թախիծով և սրտաճմլիկ կերպիւ է նկարագրում այն աղէտները, որոնց հանդիպեցին այս գեղեցիկ իդէալներով հայրենիք դարձող երիտասարդները։ Տէր Աստուած, ի՞նչ զրապարտութիւններ չբարդեցին նրանց գլխին. նրանց լեզուի վրայ ծիծաղում էին, նրանց արհամարհում էին իրը անհաստատ, համոզմումքից զուրկ անձանց, որոնք ոչինչ պիտանի գիտութիւն չունին, նրանցից ամեն մէկին մի մի աղանդաւոր էին համարում։ Եւ որոնք էին այս ոլսերիմ թըշնամիները։ Ցաւ է ասել, որ նրանք այն դասին էին պատկանում, որ իր կոշմամբ պարտաւոր էր ամենից աւելի փայփայել, սիրալիր ընդունելութիւն ցոյց տալ նրանց։

Պալասանեանը չէ բաւականանում միայն հայոց անցեալն ուսումնասիրելով նա հոգում է նաև ներկայի մասին. նա ճանաշում է իր ազգի բարոյական կողմերը և յարմարեցնում է դրան «տասն և իններորդ դարու նշանաբանը»<sup>1)</sup> այսինքն որ հայ ազգը չ'աղէտքէ մեռնի և չի կարող մեռնել։ Նա տեսնում է, որ հայն սթափուեցաւ իր բարոյական թմրութիւնից. նա իմացաւ թէ իր գոյութիւնն երեկուանից չէ սկսում, այլ ունեցաւ մի փառաւոր անցեալ, ունեցաւ իր ծիգրաններն ու ծրդատները, Վարդաններն ու Վահանները, Սմբատներն ու Լեռնները, Ներսէմներն ու Սահակները, որոնց մեծագործութեան յիշատակներն ոչ միայն գրքերն են լցնում, այլ և հայրենի երկրի բոլոր անկիմները ծածկում են։ Հայն սկսաւ զգալ թէ ինքն էլ ուրիշների պէս մարդ է, թէ ինքն էլ ուրիշ

<sup>1)</sup> Տես. Փորձ. Բ տարի. №-1. Էջ 129-174։

ազգերի պէս գոյութեան իրաւունք ունի, և թէ պէտքէ պահպանէ իր ազգային առանձնութիւնները, իր լեզուն, իր կրօնը, իր սովորութիւնները։ Պալասանեանն իրաւացի կերպիւ կշտամբում է նրանց, որոնք այս բնական և օրինաւոր ձգման դէմ մեր մէջ դժբաղտաբար զի՞նաւորում են, որոնք համարագրացիութեան (cosmopolitisme) սկզբունքներով տոգորուած՝ կարծում են թէ հայը չէ կարող ոչինչ յառաջադիմութիւն անել, ոչինչ օգուտ բերել իրան և ուրիշներին, քանի որ կաշխատի պահպանել իր ազգային անհատականութիւնը։ Ուրիշներն աւելի ստոր զգացմունքներից ովեսրուած, մուլթ անկիւններում համարձակում են հեղնօրէն խօսել հայութեան վերածնութեան վրայ, կամենալով հաւատացնել թէ հայկական կեանքը քաղաքակրթութեան տարրեր չէ բովանդակում իր մէջ, հետևապէս և աւելորդ յամառութիւն է այդ կեանքին հաւատարիմ մնալ։ Թէ առաջինները և թէ վերջինները կեղծ մարդասիրութեան դրօշակի տակ մտած՝ քարոզում են մեզ հրաժարուել մեր ազգային առանձնութիւններից և խառնուել, ձուլուել ուրիշ ազգերի հետ։ Հայրենասիրութիւնը և ազգասիրութիւնը մի անօգուտ և աննպատակ ցնողք են համարում նրանք։ Սակայն անհնար է ամբողջ մարդկութիւնը սիրել՝ իր սեպհական հայրենիքը չսիրած, ինչպէս որ անկարելի է հայրենիքը սիրել՝ եթէ մարդ նախ իր հարազատ գերդաստանը չէ սիրում։

Խօսելով կրօնի տարբերութեան պատճառած վնասների վրայ, Պալասանեանն այն կարծիքն է յայտնում, որ մենք՝ հայերս սկսում ենք հասկանալ, որ թէ լուսաւորչական, կաթողիկ և բաղդական, մեր ամենի երակներում վազում է հայ արիւն, ամենիս կրծքում բարախում է մի հայ սիրտ, որի ցնծութեան և տրտմութեան առարկաները միևնույնն են։ սակայն հաւատափոխութիւնը վնասակար համարելով նա ասում է, այնտեղ ուր կրօնը մէկ

աղգութեան հետ է կապուած, ուր մանաւանդ աղգի գոյութեան համար քաղաքական ապահովութիւն չկայ, կրօնըն ամենաազդու միջոց է աղգայնութեան համար։ Եթէ այսօր ուրախանում ենք, տեսներով որ մեր հոռմէական աղգայինների մէջ մտած շարժողութեան չնորհիւ շատ անհատներ վերաբառնում են հայոց եկեղեցու գիրկը, կրօնամօլութեան ոգին չէ մեզ ոգմորողը, այլ մի շատ քնական և արդարացի զգացմունք, աղգայնութեան զգացմունքը։ Այն օրը, երբ ազգն այս կամ այն ճանապարհով իր ապագան ապահոված կը համարի, տարակոյս չկայ, որ խղճի աղատութիւնն օրէնքի գօրութիւն կստանայ մեզանում, որովհետեւ մեր եկեղեցին ի բնէ ներողամիտ է և զերծ ամեն տեսակ փառասիրական և ֆանատիկոսական ձգտումներից։

«Յունաստանի անկախութիւնը»<sup>1)</sup> յօդուածի մէջ կարելի է գտնել այն հայեցակէտը, որ ունէր Պալասանեանն իր աղգի աղատութեան վերաբերմամբ տաճիկ բռնակալութիւնից։ Նա թէկ Յունաստանի աղատութեան նախահայր «Միջասի» հետ բացագանչում է. միթէ դեռ երկար ժամանակ առիւծների պէս առանձնացած պիտի ապրիկ կրճերում, լեռնոտ և ժայռոտ տեղերում։ Երկար ժամանակ պիտի ապրիք մուլթ այրերում և անտառներում, զարհուրելի և դառն ստրկութեան մէջ, և պիտի փախչիք լոյսից։ Երկար ժամանակ անպաշտպան պիտի թողնէք ձեր եղբայրներին ու ծնողներին, ձեր հայրենիքը, ձեր բարեկամներին և զաւակներին, ձեր տուն ու տեղը։ Յիշեցէք որ աւելի լաւ է մի ժամ աղատ ապրել, քան հազարաւոր տարիներ անցկացնել ստրկութեան լծի և բռնակալի իշխանութեան տակ։ Մակայն, շարունակում է Պալասանեանը, յոյն ժողովրդին վիճակուած չէր նիւթական զօրու-

<sup>1)</sup> Տես. Փորձ. Բ. տարի №. 2. էջ 163-230

թեամբ զրաւել քաղաքակիրթ աշխարհի համակրութիւնը, այլ միայն արևելեան անշարժութիւնից սթափուելով և արևմտեան լուսաւորութեան հետ միանալով: Բիւզանդական և տաճկական բռնակալութիւնն ոչնչացրել էր յոյներին քաղաքականապէս. բայց ամելի մեծ ցաւն այն էր, որ ժողովրդի բնաւորութիւնը խանգարուել էր Բիւզանդական ժամանակների բարոյական ապականութեամբ և թուրքերի մեռելատիպ անշարժութեամբ: Ոչ մի արտաքին արշաւանք, ոչ մի ներքին ապստամբութիւն չէր կարող այդ երկհազարամետ ողբալի ստրկութիւնը խորտակել. այդ կը յաջողուէր միայն այն ժամանակ՝ եթէ կարելի լինէր մի անգամ էլ շարժողութեան մէջ դնել ազգի քոլոր հոգեւոր եւ բարիյական զօրութիւնները:

Յոյն պատանիները, որոնք դաստիարակւում էին արևմտեան քաղաքակիրթ երկրներում, այնտեղ սովորեցան հասկանալ իրենց հին կեանքի ոգին, մանաւանդ Գերմանիայում, ուր ամենայն մանուկ ոգեորութեամբ լսում էր թէ ինչպէս մի ափ յոյն ժողովուրդ Նւրոպայից յետ մղեց պարսիկ բարբարոսներին: Կարճ էր չզարթել յոյն ուսանողների մէջ այն միտքը՝ թէ իրենք էլ պէտք է միացնեն իրենց թոյլ ուժերը՝ կործանելու նոյնպիսի բարբարոսութեան մնացորդներն իրենց հայրենիքում: Ականատես մարդիկ պատմում են թէ որպիսի յափշտակութեամբ Շիլլէրն Ենայում համոզում էր յոյն ունկնդիրներին իրենց հայրենիքն ազատելու:

Մի ուրիշ յօդուածի մէջ<sup>1)</sup> Պալասանեանը հարց է տալիս իրեն. արդեօք չայաստան աշխարհի որդիքը բարոյական իրաւունք ունին մտածելու իրենց ապագայ բարորութեան վրալ. և պատասխանում է ովկորուած և գողտ-

<sup>1)</sup> Տասն և իններորդ դարու նշանաբանը. տես. Փորձ. բ. տարի №. 1. էջ 129-174.

րիկ խօսքերով. ոչ ոք կարող չէ գոյութեան իրաւոնքից դրկել այն ազգին, որի ուսերի վրայ բարձած էր անցեալում քրիստոնէական գաղափարի համար տուած պատերազմի ծանրութիւնը, և որին նոյն իսկ արևմտեան ազգերի կարծիքով, վիճակուած է ապագայում նոր քաղաքակրթութեան միջնորդ հանդիսանալ եւրոպական և ասիական ազգերի մէջ։ Բացի սրանից հայերը, աշխարհիս ամենահին ազգերից մինը, նոր ժամանակներում ցոյց տուին թէ իրենց կենսական ոյժը չէ սպառուել, այլ արևի ջերմութիւնից և զրի խոնաւութիւնից զուրկ տունկի պէս երկար ժամանակ թառամած վիճակի մէջ են մնացել՝ նոր զօրութեամբ զարգանալու ու բարգաւաճելու համար։ Հազիւ կէս դար կայ, որ այդ արևի ջերմութիւնն սկսաւ տաքացնել հայի թմրած մարմինը և զուրը կազդրուել նրա հոգին, և ահա այսօր այդ մարմինը կենդանութեան նշաններ է ցոյց տալիս, այդ հոգին արձակւում է դարեւոր տգիտութեան կապանքներից։ Կարճ միջոցում կազմուեցաւ մի նոր հայկական լեզու, նոր մազերի ու քաղաքակրթութեան թարգման, դիւթական զօրութեամբ յարութիւն արաւ մի նոր գրականութիւն, որ թէև դեռ մանուկ, սակայն խոստանում է աճել և գեղեցիկ պտուղներ արտադրել։ Մնում է մեզ այս ճանապարհով ընթանալ, առանց երբէք վհատելու, առանց փոքրոգութեամբ տեղի տալու այն խոչնդուտների առաջ, որոնց կարող ենք հանդիպել մեր վերածնութեան շաւդի վրայ, և այն ժամանակ ամենայն հայ կարող է հանդարտ աշքով նայել հեռաւոր ապագայի վրայ, ամենայն ճշմարիտ հայ կարող է համարձակ կրկնել Գարնիէ Պատէսի հետ, ամի ազգ շպէտք է մեռնի, նա չէ կարող մեռնել։

Պալասանեանը յայտնի է մեր նոր գրականութեան մէջ նաև իբրև կրիտիկոս. «Գրիշ» կեղծ անուան տակ ծածկուած՝ նա զարդարում էր «Փորձ» հանդիսի էջերն իր ա-

նաշառ և ընդարձակ քննադատութիւններով, որ ցայծմ անզուգական մնաց մեր մանուկ գրականական ասպարի զում։ Ոչ ոք չէ կարող ժխտել, որ քննադատութիւնը, եթէ նա հիմնուած է առողջ և անաշառ սկզբունքների վրայ, մեծ օգուտ կարող է բերել այն անձանց, որոնք հրապարակական ասպարիլի որ և է աստիճանի վրայ երեւմ են՝ առաջնորդելով նրանց իրենց գործունէութեան մէջ։ Քննադատութիւնն այն գորաւոր միջոցն է, որ հասարակական կեանքի անիւը տեղից շարժում և պարտ ու պատշաճ ուղղութիւն է տալիս նրան։ Մեր նոր լեզուն և գրականութիւնը, չնայելով իրենց մանուկ հասակն՝ քիչ շատ յառաջադիմել են, բայց այդ յառաջադիմութիւնն ամելի արդիւնաւէտ կլինէր անշուշտ, եթէ ունենայինք Պալասանեանի նման քանի մի անաշառ և խոհուն քննադատներ։

Պալասանեանը չ'նայելով իր զբաղմանց շատութեանը՝ հետևում էր նաև եւրոպական գրականութեան նորութիւններին։ նա թարգմանում էր գիտական ընդարձակ յօդուածներ և յարմարեցնում մեր կեանքի պահանջներին։ այսպէս նա զբում է. «Գիտութիւն և կրօն», «Աղգերի զարգացման օրէնքները», «Բնաւորութիւնների ժառանգականութիւնը» և այլն, որոնք նրա ինքնուրոյն պատմական հետազոտութիւնների հետ ի միասին տըլում էին «Փորձ»-ի մէջ և ամենայն համակրութեամբ կարգացում հայ երիտասարդութիւնից։

Օտար գրականութիւնն ուսումնասիրելով Պալասանեանը շատ անգամ բարի նախանձ է զգում։ իր քննադատութիւններից մէկի մէջ<sup>1)</sup> օրինակի համար նա ասում է. ամեն անգամ որ կարդում եմ ուզիշ ազգերի ժողովը-

<sup>1)</sup>) «Նալայ ու Դամայանտի». տես. Փորձ. Բ. տարի. №. 3. էջ 326—336.

դական բանաստեղծութիւնները, ցաւը և նախանձը տիրում են սրտիս. Խնչի՝ մենք էլ չպէտքէ ունենայինք մեր դիցազնական վէպերն ու զրոյցները, որոնց մէջ հռչակուած լինին հայ հերոսների սխրագործութիւնները. Պատմական յիշատակարանները ցոյց են տալիս թէ հայ վիպասանների բամբիոն ու քնարն երկար ժամանակ հնչել են Հայաստանի գեղեցիկ երկնքի տակ ու մասնաւրապէս գինաւէտ Գողթան այգիների մէջ։ Ո՞ւր են խորենացու յիշատակած՝ «Ժուկելեաց երգերը»։ Ո՞հ, ի՞նչ անդին գանձեր կլինէին նրանք մեզ համար, ի՞նչ դիւթական զօրութիւն կունենային նրանք մեր մատաղ սերնդի վրայ, որ սովոր է լսել միայն մի քանի կցկտուր, անհոգի ու անկենդան տեղեկութիւններ մեր պատմական անցեալից՝ առանց լսածների խորհուրդն իմանալու, առանց գործող անձանց գործերը սիրելու։

Պալասանեանը զբաղւում էր նաև ժամանակակից խնդիրներով. երբ արևելեան վերջին Ռուս-տաճկական պատերազմից անմիջապէս յետոյ Հայաստանի հայ ժողովուրդը կրկին ձգտումներ էր ցոյց տալիս գաղթելու, Պալասանեանը հանդէս է գալիս իր «գաղթականութեան խընդիրը» յօդուածով<sup>2)</sup> և զգուշացնում է հայ ժողովրդին այդ ազգութիւն կործանող ձեռնարկութիւնից. Յօդուածի սկզբում նա խօսում է Շիլլէրի բերանով.

...Ո՞հ, պինդ ամրացրու

Սզգութեան կապը, սրտով միացիր

Մեր սուրբ, ժանկազին հայրենիքի հետ.

Նրա մէջ հաստատուած են քո զօրութեան

Պինդ արմատները. նրանից հեռու,

Օտար աշխարհում կը լինիս մենակ

<sup>2)</sup> Տես. Փորձ Բ աարէ. №. 4 էջ 149—201։

Եւ անօգնական ինչպէս թոյլ եղէզն,  
Որին կը կոտրէ ամեն փոթորիկ։

Ապա յառաջ բերելով հայոց պատմութեան մէջ տեղի ունեցած բազմաթիւ գաղթականութիւններն ու դրանց վնասակար ազդեցութիւնը բացատրելով՝ Պալասանեանը սրտի ցաւով ասում է, ուր էք կամենում գաղթել. որտեղ յոյս ունիք գտնել այն տնտեսական և բարոյական ապահովութիւնը, որ ամենայն ժողովուրդ իսկապէս իր բնիկ երկրում պիտի աշխատի ձեռք բերել և որ օտարութեան մէջ յաճախ աւելի դժուար է ստացուած. միթէ անցեալի օրինակները ձեր աշքի առաջ չե՞ն:... Եթէ այսօր օտարի կողմից չէ կարելի տեսնել այն գաղանային բռնակալութիւնը, որին ենթարկուեցան օրինակի համար իտալիայի և Լեհաստանի հայ գաղթականները, դրա փոխարէն նոր քաղաքակրթութիւնն ունի աւելի նուրբ միջոցներ ներգործելու, որոնք նրանով աւելի վտանգաւոր են, որ ամբոխի աչքերին չեն երևում. հետևապէս և դժուար է լինում նրանից անվնաս մնալ:... Ամենալաւ օդն այն է, ուր ազգը ծնել է:.. 2է, պանդխտասէր հայ, բաւ է որքան քո հայրենն ու պապերը թափառեցան օտար երկնքի տակ. իմացիր որ եթէ դու էլ և քեզ նայելով քո որդիքն էլ աչքերդ անդադար հայրենիքից դուրս ունենաք, օր կը զայ, որ ձեզանով ոչ միայն ձեր ազգութիւնը կորուստ կունենայ, այլ և մարդկութիւնը... Եթէ մինչև այսօր հեռանալով քո երկրից փոքր ի շատէ արդարանում էիր, մեծ յանցանք կը լինէր քո կողմից ու մեծ ապերախտութիւն հայրենիքիդ դէմ՝ պանդխտութիւնըդ շարունակել և ներկայումս....:

Պալասանեանն այն կարծիքի էր, որ այն հայ երիտասարդները, որոնց գիտութիւնը և տաղանդն ոչինչ օգուտ չէ բերում հայ հասարակութեանը, համակրութեան արժանի չեն: Այսպէս օրինակի համար իր յօդուածնե-

րից մէկի մէջ<sup>1)</sup> նա պատմում է այն հայ երիտասարդ՝ ների գործերը, որոնք մեծ հոչակ էին հանել Աթէնքում իրեւ գիտնականներ, — որոնցից մէկի, Պրոյերեսիոսի համար հոռվմայեցիք պղնձէ արձան կանգնեցրին „regina terum roma, regi eloquentiae“ մակագրութեամբ, որ նըշանակում է. «թագաւորների թագուհի Հռովմը՝ պերճախօսութեան թագաւորին».—սակայն նա չէ ոգևորում սրանցով, որովհետև ինչպէս Պրոյերեսիոսի, այնպէս և միւս աթենացի հայ գիտնականների մտաւոր գերազանցութիւնը բոլորովին անպտուղ անցաւ Հայաստանի համար՝ և այս բանը յիշելու արժանի է համարում միմիայն նրա համար, որ ցոյց տայ թէ ուսման և գիտութեան սէրը վաղուց արդէն զարթել էր հայոց մէջ և թէ միայն մի զարկ էր հարկաւոր որ այդ սէրը տարածուէր ընդհանուր հայ ազգի մէջ...»

Այս փոքրիկ տեսութեամբ մենք ցանկացանք ցոյց տալ Պալասանեանի գրականական ուղղութիւնը՝ նոյն խակ իր երկերից անմիջապէս։ Այդտեղ պարզապէս երեսում են նրա ներքին արժանաւորութիւնները։ նա ունի նուրբ զգացմունք, ազնիւ ձգտումն, զգայուն սիրտ, խոհուն դատողութիւն, լուրջ և քննադատական հայեացք իրերի վրայ, լիակատար ճանաչողութիւն մեր անցեալ և ներկայ կեանքի, ողորկ և գրաւիշ լեզու, սիրող եւրոպական գրականութեան և այս ամենի պսակը կազմող՝ անսահման անծնանուիրութիւն եւ սէր դէպի հայ ազգն ու նրա հայրենիքը։

### ԻՄ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



<sup>1)</sup> Հայոց մտաւոր շարժողութիւնը երդ դարում։